մահարձան ի գրքատուն սրբ Յակոբայ վանուց յերուսաղէմ ի յիշատակ գրավաճառ մարգարի, որ հանգեաւ ի Տէր 1847 սեպ. 2 Պոլիս»։ Շեղագրով՝ «Այս մատենս հեղինակն է Երեմիայ Չէլէպին, որդի տէր Մարտիրոս քահանային. տես յերես 542. պատմող բանիս Ղեւոնդ վրդ՝ պ յուխտէն Վարագայ. 1872 ապր. 2, ի Կ. Պոլիս»։ Թղ. 2բ. Երեմիա Չէլէպի իր ձեռքով գրած է գիրքին անունը «Ժամանակագիր եւ Պատմութիւն»։ Թղ. 2բ. օտար գրչէ. «յամի տէն Ռձէ տճկց \.օ՝ ին մայրաքաղաքիս Թգրն էր սուլթան իպրահիմն»։ Թղ. 281ա. ձեռագիր Ղեւոնդ վրդ. Փիրղալէմեանի.« Ռձէ. 1658 Նոյեմբեր 3 մէնի Ամպակում բարեպաշտ հոգեւոր դաստիարակն Երեմիա Չէլէպլուոյն վախճանի»։ Թղ. 353բ. Նոյն ձեռ. «հեղինակ օրագրութեանս է Երեմիա Չէլէպի որդի տէր Մարտիրոս քահանայի, տես յերես 542 եւ 544»։ Դաստարկ՝ Թղ. 1, 7բ, 8ա, 9բ, 19ա, 22բ, 23բ, 29ա–30բ, 62բ, 104, 128, 141բ, 152բ, 154ա, 194բ, 206բ, 239, 240, 281բ, 342բ, 348բ, 371բ, 372ա։

Օրագրութիւնս կը սկսի ՌՂԷ = 1648 տարուան Յունիս 11ին ու կ'աւարտի ՌՃԺԱ. = 1662 Նոյեմբերին։ Այս տարիներու կարգէն դուրս կը մնայ ՌՃ = 1651 տարին, որմէ ոչինչ չէ արձանագրած։

* * *

Աւելորդ կրկնութենէ խուսափելու համար զանց կ'ընենք տալ Օրագրութեանս ամփոփումը։ Ուշադիր ընթերցողը պիտի գտնէ հոն շատ մը հետաքրքրական տեղեկութիւններ 1648–1662 տարիներուն տեղի ունեցած ազգային–եկեղեցական անցուդարձերու մասին։ Ատոնց մէջ ուշագրաւ ու կարեւոր են Ս. Էջմիածնի Փիլիպպոս և Սիսի Թորոս կաթողիկոսներու Կ. Պոլիս այցելութիւնը, վերջինիս մահը և յուղարկա-